«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Հաստատված է դպրոցի մանկավարժական խորհրդի 22.08. 2023 թ.-ի հ. 1 նիստում

2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Տնօրենի տեղակալներ՝
Մովսիսյան Արմինե
Գալստյան Գեղանի

Տնօրեն՝ / Ս. Գալստյան/

Նախաբան

Ազգային դպրոցը պետության զարգացման և հզորացման գրավականն է։
Կրթությունը անհատի, հասարակության և պետության շահերից բխող ուսուցման և դաստիարակության միասնական գործընթաց է, որի գերնպատակը անձի կայացումն է, լիարժեք զարգացումն ու ինքնադրսևորումն է: Հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական, ճանաչողական և սոցիալական զարգացմանը, նոր անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքին, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը։

2023-2024 ուսումնական տարում հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, ֆիզիկական, հոգևոր և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումն է, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

Ազգային դպրոցի յուրաքանչյուր մանկավարժի առաջնային խնդիրն է ժամանակակից մեթոդներով զարգացած, խելացի անձ ձևավորելը՝ օժտված ազգային և համամարդկային մտածելակերպով, մարդասիրական հատկանիշներով և մասնագիտորեն կողմնորոշված: Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը բարձրացնելու համար կիրառել համագործակցային ուսուցման նոր մեթոդները և նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները։ Արդյունավետ դասի արդյունքում կարևորել միջնակարգ կրթության շրջանավարտներից ակնկալվող կարողությունները եւ հանրակրթական հիմնական ծրագրերի ուսումնառության վերջնարդյունքները։ Մեծ ուշադրություն դարձնել աշակերտակենտրոն դասապրոցեսի կազմակերպմանը, ուսուցիչ-աշակերտ-ծնող հարաբերություններին, ինտերակտիվ մեթոդների կիրառմանը:
Յուրաքանչյուր սովորողի՝ իր հնարավորությունների չափով մասնակից դարձնել դասապրոցեսին՝ ապահովելով նրանց ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը: Չափորոշիչ, որը նպատակաուղղված է հավասարապես հասանելի ներառական և որակյալ կրթության ապահովմանը: Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից:

Շարունակել աշխատանքը ուսուցիչների մանկավարժական մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Ուսումնասիրել և գործնականորեն կիրառել մանկավարժական մասնագիտական նորագույն նվաճումները, և հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվետվությունների և օրինակելի դասերի միջոցով:

Կրթական կարգում սահմանվում են եռաստիճան դպրոցի հետեւյալ նպատակները՝

Տարրական դպրոցի հիմնական նպատակը սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական կարողությունների, լեզվամտածողության, գրագիտության, տրամաբանության հիմքերի և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորումն է: Տարրական դպրոցն ապահովում է ուսումնառությանն անհրաժեշտ պայմաններ և միջին դպրոցում ուսումը շարունակելու համար պահանջվող մակարդակ:

Միջին դպրոցի հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողներին ավագ դպրոցում կամ ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար:

Ավագ դպրոցի հիմնական նպատակը սովորողի մասնագիտական կրթություն ստանալու , ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումն է:

Ուսումնական գործընթացի ապահովումն իրականացնելու համար անհրաժեշտ է վերահսկողություն: Դա ամենօրյա աշխատանք է, որն իր մեջ ներառում է բազմակողմ դիտարկում և բարելավման ուղիների առաջադրում՝ ընդգրկելով դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա իրագործվող հիմնախնդիրները:

2023-2024 ուսումնական տարում իրագործվող հիմնախնդիրներ

1. Հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:
2. Ուսումնական պարապմունքների դասացուցակի կազմում :
3. Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում:
4. Ուսումնական ծրագրերի կատարում:
5. Առարկայական մասնախմբերի աշխատանքների ղեկավարում:
6. Մեթոդական աշխատանքների կանոնակարգում:
7. Դասավանդման որակի վերահսկում:
8. Ուսուցչի լավագույն աշխատանքի, դրական փորձի տարածում:
9. Սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման վերահսկում:
10. Ուսուցիչների կրթական և մանկավարժական ոլորտներում տեղ գտած նորությունների և փոփոխությունների իրազեկում:

Ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումը

1. Դպրոցում գործող լավագույն օղակը համարել մանկավարժական խորհուրդը:
2. Կատարել դպրոցական բաղադրիչների նպատակային բաշխում:
3. Հետևել ծրագրերի և դասագրքերի ճիշտ ընտրությանը:
4. Հետևողականորեն կատարել ճիշտ դասաբաշխում:
5. Հետևել դասղեկների կողմից աշակերտների անձնական գործերի վարմանը:
6. Հաամակարգել աշակերտական և դասարանական խորհուրդների աշխատանքները՝ համագործակցելով ՄԿԱԳՏ-ի հետ
7. Աշակերտների նկատմամբ իրագործել միասնական պահանջներ:
8. Հետևել օրվա պլանների առկայությանը:
9. Ըստ դիմումների կազմել 9-րդ դասարանի աշակերտների կողմից բնագիտական և օտար լեզուներ առարկաների քննությունների ընտրության հարցը:

10. 4-րդ, 9-րդ,12-րդ դասարանների սովորողների համար կազմակերպել խորհրդատվական պարապմունքներ՝ քննություններին նախապատրաստելու համար: Կազմել ժամանակացույց:
11. Ժամանակին կազմել և հաստատել /4-րդ, 9-րդ, 12-րդ/ քննական և ստուգող հանձնաժողովների կազմը, փակցնել քննական կարգացուցակը:
12. Մանակցել <<Մեղու>> մայրենիի մրցույթին:
13. Մասնակցել <<Կենգուրու>> միջազգային մաթեմատիկական մրցույթին:
14. Ճիշտ կազմակերպել օլիմպիադաների հայտագրումը և ընթացքը:
15. Ժամանակին կազմակերպել օլիմպիադաների դպրոցական փուլը և ապահովել լավագույնների մասնակցությունը տարածքային փուլին:
16. Համակարգել և վերահսկել ուսումնական հաստատությունում իրականացվող նախագծային աշխատանքները:

Էլեկտրոնային մատյանների հետ տարվող աշխատանքներ

Ստուգել՝

1. Էլեկտրոնային մատյանների վարման կարգը:
2. Էլեկտրոնային մատյանների գրանցումները:
3. Ծրագրերի կատարողականը:
4. Գրավոր աշխատանքների քանակը:
5. Գործնական աշխատանքների քանակը:
6. Աշակերտների ճիշտ գնահատումը:
7. Դասացուցակի մուտքագրումը:
8. Դասղեկի էջի գրանցումները:
9. Կիսամյակային և տարեկան առաջադիմության ամփոփումը:
10. Էլեկտրոնային մատյաններում տարեվերջյան մանկավարժական խորհրդի որոշման ամրագրումը /աշակերտների փոխադրումը հաջորդ դասարան/:

2023-2024 ուսումնական տարում

Դպրոցի կառուցվածքը

«ՀՀ Գեղարքունիքի մարզ գյուղ Ներքին Գետաշեն N1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Դպրոցի տնօրեն

Տնօրենի տեղակալ - 1

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ - 1

Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ -1

Ձինղեկ -1

Հաշվապահ-1

Գրադարանավար- 1

Կառավարման խորհուրդ – 9 /ինը/ անձ

Դպրոցի բոլոր մանկավարժները ՄԽ-ի անդամ են՝ 54 անձ

Դպրոցն ունի մանկավարժական խորհուրդ և աշակերտական խորհուրդ

Դաստիարակ -4

Ուսուցչի օգնական-9

Օպերատոր-2

Դպրոցում ձևավորվում է 8/ութ/ առարկայական մասնախմբեր։

Ն. Գետաշենի №1 միջնակարգ դպրոցի առարկայական մասնախմբերի անդամների

2023-2024 ուսումնական տարվա

Ցուցակ

№№	ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ	ԱՆԴԱՄՆԵՐ
1.	Հումանիտար առարկայական Հայոց լեզու և գրականություն	Անտոնյան Անուշ Եղիազարյան Նունե Շահինյան Հասմիկ Ադամյան Եվա Շահինյան Սյուզաննա Խաչատրյան Արմինե Կիրակոսյան Արմենուհի Կյուրեղյան Նելլի
2.	Օտար լեզու Գերմաներեն Անգլերեն	Սահակյան Նելլի Վարդանյան Գագիկ Գևորգյան Մերի Բեյբության Զարմանդուխտ
3.	Ռուսաց լեզու	Սուքիասյան Տիգրանուհի Կիրակոսյան Աշխեն Շահինյան Հերմինե Մելիք-Վահանյան Անի Ստեփանյան Անուշ

4.	ԲՏՃՄ Մաթեմատիկա Ինֆորմատիկա	Գրիգորյան Արթուր Շահինյան Թաթուլ Մալխասյան ժաննա Գալստյան Գեղանի Մովսիսյան Արմինե Թևոսյան Հովհաննես ճաղարյան Գոհար Հունանյան Մերի Մնացականյան Աննա
5.	ԲՏՃՄ Ֆիզիկա Քիմիա Կենսաբանություն Աշխարհագրություն Բնագիտություն	Գևորգյան Լալա Բաղդասարյան Գայանե Մելիքյան Մարիետա Բալայան Նովելա Տարախչյան Լալա Պետրեսյան Դոնարա Գևորգյան Աշխեն
6.	Հումանիտար առարկայական Պատմություն, Հայոց եկեղեցու պատմություն, Հասարակագիտություն Հայրենագիտություն	Ղազարյան Մանվել Տարախչյան Լալա Կյուրեղյան Մերինե Գևորգյան Սյուզաննա Հարությունյան Լարիսա
7	Արվեստ /արհեստ ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն, Ֆիզկուլտուրա, Տեխնոլոգիա, Երաժշտություն, Կերպարվեստ, Շախմատ	Հայրապետյան Նունե Գևորգյան Կարեն Ասատրյան Հակոբ Մխիթարյան Վեներա Երեմյան Երեմ

		Մուրադյան Գոհար Հունանյան Մերի Պետրոսյան Հայկ
8	Տարրական դասարանների դասավանդում	Գրիգորյան Թամարա Աղջոյան Հասմիկ Գրիգորյան Անուշիկ Մարտիկյան Էվելինա Զաքարյան Անահիտ Հովակիմյան Շուշանիկ Սահակյան Տաթևիկ Բուռնության Լյուդմիլա Սարոյան Մերի Հովհաննիսյան Լուսիկ Փինաչյան Նորետա Ժամկոչյան Ալինա Հակոբյան Տաթևիկ

2023-2024 ուսումնական տարում ուսումնական հաստատությունը, ելնելով շենքային պայմաններից, ուսուցումը տարրական դասարաններում իրականացնում է առանձին մասնաշենքում՝ երկհերթ հաճախմամբ, հնգօրյա ռեժիմով:

5-12րդ դասարաններում սովորողների ուսուցումը իրականացվելու է միահերթ հաճախմամբ՝ երկրորդ հերթ , շաբաթական վեցօրյա ռեժիմով:

Մեկ ակադեմիական դասաժամը 45 րոպե է:

Տարրական դպրոցում.

Առաջին հերթի ուսումնական պարապմունքները սկսվում են ժամը 8^{30}-ին և ավարտվում՝ ժամը 12^{35}-ին:

Երկրորդ հերթը սկսվում է 12^{45}-ին և ավարտվում ՝ 18^{35}-ին:

Հաստատության լեզուն գրական հայերենն է: Դպրոցի ուսումնական գործընթացը իրականացվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարի հաստատած օրինակելի ուսումնական պլանով և առարկայական ծրագրերով:

Գործում է սովորողների ուսումնառության գնահատման 10 միավորային սանդղակ:

Այն իրականացվում է օրինակելի ուսումնական պլանի 42-րդ կետի 18-26 ենթակետերի համաձայն:

2023-2024 ուսումնական տարում հաստատությունում ուսումնական պարապմունքները սկսվում են 2023 թվականի սեպտեմբեր 1-ին և ավարտվում 2024 թվականի մայիսի 25-ին /5 -օրյա/,26 –ին /6 օրյա/

Դասարան	1-ին կիսամյակ	2-րդ կիսամյակ	Ընդամենը
1-ին	14շաբաթ 3 օր	16 շաբաթ	30 շաբաթ
2-րդ	15 շաբաթ 3 օր	17 շաբաթ	32 շաբաթ
3- 12րդ	15 շաբաթ 3 օր	19 շաբաթ	34 շաբաթ

2023-2024 ուսումնական տարում սովորողներին տրվող արձակուրդներ

Դասարաններ	Աշնանային	Ձմեռային	Գարնանային
1-ին դասարան	16. 10. 23-29. 10. 24	25. 12. 23-21. 01. 2024	18. 03. 23-31. 04. 2024
2-րդ դասարան	23. 10. 23-29. 10. 24	25. 12. 23-21. 01. 2024	25. 03. 24-31. 04. 2024
3-12-րդ դասարան	23. 10. 23-29. 10. 23	25. 12. 23-07. 01. 2024	25. 03. 24-31. 03.2024

2023-2024 ուսումնական տարում ձևավորվել են 34 դասարաններ՝ 894 աշակերտով /26,5 միջին խտությամբ/: Հաստատությանը կից գործում է նախակրթարան, որտեղ հաճախում են 63 սան:

Դասարաններ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Դասարանների թիվը	3	3	3	3	3	3	3	3	3	3	2	2
Աշակերտների թիվը	82	80	76	96	84	88	84	79	72	61	49	43

2023-2024 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան ըստ ամիսների

N	Գործունեություն/ պլանավորում	Վերահսկողություն/ նպատակ	Ակնկալիք/ արդյունք	Նշումներ
		Օգոստոս		
1.	Հանրակրթության պետական չափորոշչում կատարված փոփոխությունների ուսումնասիրություն և ներկայացում մանկավարժական խորհրդին: Ծանոթացում ուսումնական ծրագրերին,չափորոշչային պահանջներին, դասագրքերի վերջին փոփոխություններին, մեթոդական նամակներին կից գրություններին և ուղեցույցներին:	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի ապահովում		Ուսումնական տարվա ընթացքում
2.	Հաստատության 2022-2023 ուստարվա ներքին գնահատման հաշվետվության վերանայում և կատարված աշխատանքների արդյունքների ներկայացում ամփոփման:	Նախորդ ուսումնական տարվա հաշվետվություն		
3.	Հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողների ընդունելության կազմակերպում և դասարանների կազմավորում: ● Տարրական դպրոց 12 դասարան ●Միջին դպրոց 15 դասարան ●Ավագ դպրոց 7 դասարան	ՀՀ << Կրթության մասին>> օրենքի և դպրոցի ընդունելության կարգի պահպանում		
4.	1-ին, 5-րդ և 10-րդ	Դասարանների	Սահուն	

	դասարանների վերջնական կազմավորումը ներկայացնել մանկավարժական խորհրդի նիստում: Նշված դասարանների դասղեկների հետ ուսման առաջադիմության, կրթական վերջնարդյունքների, չափորոշչային պահանջների ապահովման մեթոդների քննարկում:	կազմավորում՝ <<Հանրակրթության հիմնական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման>> կարգի պահանջներին համապատասխան	անցում՝ տարրականից միջին և միջինից ավագ դպրոց	
5	2023-2024 ուստարվա առարկայական մասնախմբի ձևավորում և նախագահների առաջադրում		Մեթոդմիավորման կանոնադրության պահպանում	
6	Մեթոդական միավորման նախագահների, դասղեկների, ուսուցչի օգնականների տարեկան աշխատանքի պլանների և ուսուցիչների թեմատիկ պլանավորումների ստուգում և հատատում:	Առարկայան թեմատիկ պլաններում չափորոշչային պահանջների համապատախանության ապահովում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման ապահովում:	Հաստատության ուսումնական գործընթացի նպատակների, ռազմավարության և դրանցից բխող խնդիրների լուծման ապահովում համապատասխան առարկայի չափորոշչային վերջնարդյունքի և ակնկալվող կարողությունների	
7	2023-2024 ուսումնական տարվա ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչով սահմանված ժամաքանակի տնօրինման վերաբերյալ մեթոդական	Ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչների տնօրինում:	Սովորողների կրթության բարձր որակի ապահովում:	

	միավորումների առաջակարկությունների ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում:			
8	Հաստատության 2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական պլանների կազմում և ներկայացում մանկավարժական խորհրդի քննարկման ու հաստատման :	ՀՀ «Կրթության մասին » օրենքի և ուսումնական պլանի պահանջների կատարում:		
9	2023-2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական պարապմունքների դասաբաշխման կատարում, քննարկում մանկավարժական խորհրդի նիստում:		Դասաբաշխման համապատասխանեցում ուսուցիչների մանկավարժական փորձին ու կարողություններին, նրանց միջին ծանրաբեռնվածությանը:	
10	2023-2024 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դասացուցակի կազմում:	Դասացուցակի կազմում՝ համապատասխան սանիտարական կանոնների և նորմերի:	Սովորողների ուսման և հանգստի ռեժիմի սահմանում: Ըստ տարբեր առարկաների բարդության աստիճանի դասավանդման համապատասխան դասաժամի տրամադրում :	
11	Ուսուցիչներին ներկայացնել դասաբաշխումը և դասացուցակը, ելնելով նրանց շաբաթական	Ուսումնական գործընթացի համակարգում: ՀՀ կառավարության որոշում:		

	ժամաքանակի ծանրաբեռնվածությունից, կատարել աշխատաժամանակի նորմավորում ըստ կողմնորոշիչ աղյուսակի ու դասացուցակի ընձեռած հնարավորության:			
12	2023-2024 ուսումնական տարվա տարիֆիկացիայի և նրա բաղադրիչների կազմում:	Դպրոցի ուսումնական պլանի պահանջների կատարում:		
13	Բացակա ուսուցիչների հաշվառում, բաց թողած, փոխարինած դասաժամերի արձանագրում և ժամավճարային հաշվարկների ներկայացում:		Բացառել ՀՀ կառավարության որոշումների խախտումը:	Ուսումնական տարվա ընթացքում
14	Ուսուցիչներին ծանոթացնել նոր ուսումնական տարվա գնահատման համակարգի վերաբերյալ մեթոդական ցուցումներին, ներքին ու արտաքին գնահատման համակարգի գործընթացին: Միավորային գնահաման բաղադրիչների բանավոր հարցման, գործնական և գրավոր աշխատանքների քանակի ճշտում, ըստ առարկաների և դասարաններին հատկացված շաբաթական ժամանակաքանակի:			Ուումնական տարվա սկզբին
15	Ուսումնական տարվա սկզբում հրավիրել տնօրենի տեղակալների և մեթեդական միավորումների նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց տարեկան աշխատատանքային գործունեությունը:Կազմել		Արդյունավետ աշխատանքի ապահովում:	

	յուրաքանչյուր ամսվա վերջում անցկացվող մասնախմբերի նիստերի տարեկան ժամանակացույցը: Պարտավորեցնել մասնախմբերում քննարկել և մանկավարժական խորհրդի նիստին ներկայացնել նախնական դասաբաշխումը/դպրոցական բաղադրիչ/ ուսումնական պլանները:			
16	Նշանակել առարկայական մասնախմբերի ղեկավարներ, դասղեկներ, կատարել պարտականությունների բաշխում: Հրավիրել դասղեկների խորհրդակցություն, կազմել ժամանակացույց դասղեկական պլանները հաստատման ներկայացնելու և «Պաշարների շտեմարան» կայքում տեղադրելու համար:		Ըստ ոլորտների աշխատանքների ճիշտ բաշխվածություն: Դասղեկների աշխատանքի ավելի արդյունավետ և թափանցիկ իրականացում:	
17	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում և ԱՈՒՊ-ի քայլերի քննարկում: Ներառական կրթությունը, որպես նպատակ ամրագրել հաստատությունում գործող բոլոր օղակներում:	ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնառության ապահովում անհատական ուսուցման պլանի համաձայն:		
18	Քննարկումներ մեթոդական միավորումների նիստերում չափորոշիչ, թեմատիկ և օրացույցային պլաններ, օրվա դասի պլան, գնահատում, ներառական կրթություն, մեթոդ և հնարք,	Առաջավոր փորձի փոխանակում, հաղորդակցում գիտամեթոդական նորույթներին:		Ուսումնական տարվա ընթացքում:

	ուսուցչի արվելակերպ մանկավարժական ու հոգեբանական թեմաներով:			
19	Թեմատիկ առարկայական ուսումնական պլանների, առարկայական չափորոշչային պահանջների գնահատման նորմատիվների կատարողականի ընթացիկ վերահսկողություն:	Հաստատում ուսումնական գործընթացի համակարգում:		Ուսումնական տարվա ընթացքում:
20	Մանկավարժական խորհրդի որոշումների իրականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների համակարգում: Մանավարժական խորհրդին ներկայացվող տեղեկագրերի, ամփոփագրերի, տեղեկատվության և հաշվետվության կազմում:	Առաջնորդվելով դպրոցական կանոնադրության պահանջներով:		Ուսումնական տարվա ընթացքում
21	Մեթոդական միավորումների նախագահների հետ միասին կազմակերպել միջոցառումներ սովորողների գիտելիքների որակը բարելավելու, դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու, սովորողների կարողություններն ու հմտությունները զարգացնելու ուղղությամբ:	Ապահովել դպրոցի կանոնադրությանը համապատասխան կետերի պահանջները:		Ուսումնական տարվա ընթացքում
22	Մանկավարժական գործունեության վերահսկողություն սովորողների իրավուքների պահպանման ուղղությամբ:			Ուսումնական տարվա ընթացքում
	Սեպտեմբեր			
23	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում:	Հաստտության կառավարման խորհրդի կողմից հաստատված	Գիտակից և իր արարքի համար պատասխանատ	

		ներքին կարգապահական կանոնների պահպանում: Սովորողների և աշխատողների վարքագծի կանոնների պահպանում:	ու անձի ձևավորում: Սեփական իրավունքների պարտականությունների նկատմամբ գիտակցված մոտեցում:	
24	Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում:	Սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում օրինակելի ուսումնական պլանների պահանջներին և ուսումնական հաստատության համար սահմանված սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան:	Որակյալ կրթության կազմակերպում հաստատության ուսումնական պլանին համապատասխան:	
25	Սովորողերի առաջադիմության վերհսկողություն /ՆԴՎ/ ●Անցկացնել փորձնական գրավոր աշխատանքներ 5-րդ և 6-րդ դասարաններում «Մայրենի» և «Մաթեմատիկա » առարկաներից: ● Գրավոր աշխատանքների միջոցով ստուգել 2-4-րդ դասարանների սովորողների մաթեմատիկական գիտելիքները:	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում:	Ուսումնական տարա ընթացքում նպատակային դասալումների և փորձնական գրավոր աշխատանքների միջոցով ստանալ հաստատության ամբողջական պատկերը:	
26	ԿԱՊԿ ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում: Ներառված սովորողների ԱՈՒՊ-ի կազմում և դասի պլանավորում: Ուսումնական պլանները մշակել համաձայն հանրակրթական	4-րդ դասարանից 5-րդ դասարան անցումը կատարել մանկավարժական թիմի և ՏՄԱԿ-ի աջակցությամբ, կրկնակի դիտարկում կատարելով:	5-րդ դասարան փոխադրված սովորողների միջավայրային հարմարեցման ապահովում:	

	պետական չափորոշիչների և առարկայական ծրագրերի, հաշվի առնելով սովորողների կարիքները, հնարավորությունները, առաջընթացը: Անցումային գործընթացի կազմակերպում տարրական դպրոցից միջին դպրոց			
27	5-9-րդ դասարանների սովորողների ուսումնական բոլոր պարապմունների մշտադիտարկում	Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում:	Ուսման նկատմամբ պատասխանատվության և սովորելու ձգտման դրսևորումներ:	
28	Հատատության սովորողների դասագրքերով ապահովվածությունը:	Հաստատության սովորողներին դասագրքերով ապահովում «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու և հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու կարգի» պահանջներին համապատասխան:	Էլեկտրոնային գրադարանից օգտվելու հնարավորություն, ՏՀՏ-ների կիրառում:	
29	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարման մշտադիտարկում: Գործածության մեջ դնել էլեկտրոնային մատյանները, հետևել էլեկտրոնային մատյանների վարման կարգին:	Էլեկտրոնաին դասամատյանների պատշաճ լրացման ապահովում:	Emis.am հարթակում պատշաճ որակի համապատասխան ժամանակահատվածում և ամբողջական փաստաթղթավարության ունակության զարգացում:	Ուսումնական տարվա ընթացքում:

30	Ուսուցիչների գործունեության վերահսկողություն դասալսումներ, փոխադարձ դասալսումների կազմակերպում, դրանց քանակի և գրանցումների ապահովում:	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդներ և տեխնոլոգիաների ներդման ապահովում և վերահսկում:	ՈՒԴԱՊ-ով սահմանված միջինում 6-8 ժամ դասալսման իրականացում հետադարձ կապի և օբյեկտիվ վերլուծությունների հնարավորություն:	
31	Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն / ՆԴՎ/: Նախնական գիտելիքների ստուգում՝ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից 9-րդ դասարաններում :	«Հայոց լեզու» , «Մաթեմատիկա» առարկաների ուսուցման որակի ուսումնասիրություն 9-րդ դասարաններում և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն:	Մեթոդական միավորումների նախագահների հետ միասին «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաների ուսուցման որակի գնահատման հայտորոշիչ գնահատականների իրականացում 9-րդ դասարաններում :	
32	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում: Դիտարկել ուսուցիչների կոմպլեքս աշխատանքները՝ կապված աշակերտների կարդալու տեխնիկայի զարգացման հետ՝ «Մայրենի » 2-4րդ դասարաններ «Ռուսաց լեզու» 3-4րդ դասարաններ	Ոսումնական հաստատության և դասարանների մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում:	Մեթոդական միավորման նախագահների հետ արդյունքների քննարկում և հետագա քայլաշարի մշակում:	
Հոկտեմբեր				
33	Էլեկտրոնային մատյանների գրանցման,	Էլեկտրոնային դասամատյանների	Էլեկտրոն ային	

	գնահատման, բացակայությունների հարցի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում:	պատշաճ լրացման ապահովում:	դասամատյաններում տեղ գտած վրիպակների առաջացման պատճառների քննարկում և համապատասխան քայլերի ձեռնարկում և իրականացում:	
34	Ուսուցիչների աշխատանքային գործունեության ստուգում, թեմատիկ գրավոր աշխատանքների համապատասխանություն (ՆԴՎ):	Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում և գնահատման օբյեկտիվության ստուգում:	Ներդպրոցական վերահսկողության իրականացում:	1-ին կիսամյակ
35	Ուսուցիչների կողմից բոլոր դասերի պլանավորման առկայության մշտադիտարկում (5-12 –րդ դասարաններում)	Ուսուցիչների կողմից կազմած օրվա թեմատիկ պլանների վերահսկողություն, նրանց համապատասխանություն չափորոշիչների պահանջներին:	Խրախուսել օրվա դասի պլանի գործածումը, բարձրացնել դրանց կիրառման արդյունավետությունը:	
36	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով: Գրավոր աշխատանքներ տնօրինության կողմից: ●Հայոց լեզու և գրականություն	Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների և	Գրքի քննարկում նվիրված ուսուցչի օրվան:	Ուսումնական տարվա ընթացքում

	●Մաթեմատիկա ●Օտար լեզուներ ●Բնագիտական առարկաներ:	տեխոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում:		
37	Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն /ՆԴՎ/ Շարադրություն նվիրված ուսուցչի օրվան « Նամակ իմ սիրելի ուսուցչին» /9-12-րդ դասարաններ/ Տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ: ●Ռուսաց լեզուն/5-9-րդ դասարաններ/ ●Հայոց պատմություն /9-10-րդ դասարաններ/ ●Աշխարհագրություն /10-12-րդ դասարաններ/	Սովորողներ մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում:		
38	Մասնակցություն «Մեղու 2023» մրցույթին / անցկացման կարգը և ժամանակացույցը/:			
		Նոյեմբեր		
39	«Հայոց լեզու», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն » առարկաներից 9-րդ և 12-րդ դասարաններում գիտելիքների առկա մակարդակի հայտորոշման գրավոր աշխատանքներ՝ տնօրենության կողմից:	Սովորողների մոտ առկա գիտելիքների և հմտությունների հայտորոշում:	Նախաքննական սթրեսի նվազեցում, ծանոթացում քննակարգին և օբյեկտիվ ինքնագնահատա կանի ձևավորում, որից կհետևի աշակերտի ՝ իր ուժեղ ու թույլ կողմերը գիտակցելն ու ճանաչելը:	
40	Ցածր առաջադիմություն ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած սովորողներին շարունակական աջակցության տրամադրում:	Ցածր առաջադիմություն ունեցող սովորողներին կցել դասարանի լավ սովորող աշակերտներից,	Ուսման ցածր առաջադիմությա ն հաղթահարում, արդյունքի բարելավում: Անձնային աճի համար	

		ուսուցչի օգնականի: Արդակարգ ընդունակություններ դրսևորած սովորողների ընդգրկում առարկայական խմբակներում:	նպաստավոր պայմանների ապահովում, լրացուցիչ առաջադրանքների միջոցով կարողունակությունների զարգացում:	
41	Դասալսումներ՝ ●Նորակազմ դասարաններում/ հայորոշիչ բնույթի 10-րդ դասարան/ ●Ատեստավորման ենթակա ուսուցիչների մոտ / բնութագրի կազմում/ ●Երիտասարդ ուսուցիչների մոտ / մեթոդական աջակցություն/ ●Ավարտական /9-րդ, 12-րդ/ դասարաններում՝ քննություններին պատրաստվածության գնահատում	Պետական կրթական չափորոշիչներին համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վերհանում:	Վեր հանել միավորային գնահատմանը զուգահեռ ձևավորվող գնահատման իրականացման գործընթացը:	Ուսումնական տարվա ընթացքում
42	Մանկավարժների գործունեության ստուգում պետական ավարտական քննությունների նախապատրաստության ուղղությամբ:	Ուսումնական նյութերի ապահովում, առաջադիմության և հաճախումների վերահսկում:		Ուսումնական տարվա ընթացքում
43	Պարբերաբար ստուգել դասին ուսուցիչների պատրաստվածությունը, խթանել օրվա դասի պլանի գործածումը, բարձրացնել դրանց կիրառական արդյունավետությունը	Ուսուցչի գործունեության ուսումնասիրում:	Կրթական բարեփոխումներին տեղեկացված և նոր մեթոդների կիրառմամբ հարուստ դասապրոցեսի ապահովում:	Ուսումնական տարվա ընթացքում
44	Առարկայական մեթոդական միավորման աշխատանքների վերահսկողություն	Մեթոդական միավումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների		

		կիսամյակային աշխատանքների պլանի:		
45	Մասնակցել ծնողական ժողովներին, ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի նիստերին ու միջոցառումներին, հանդես գալ ուսումնադաստեարակչական բնույթի հարցրի պարզաբանմամբ:	Ծնողներին ու աշակերերտներին հուզող հարցրի պարզաբանում և վեր հանում, համապատասխան լուծումների առաջարկում:	Դպրոց-ծնողական համայնքի սերտ համագործակցութ- յուն:	Ուսումնական տարվա ընթացքում
46	Առարկայական օլիմպիադաների դպրոցական կազմ-կոմիտեյի կազմում և նիստերի գումարում, խրախուսումների առաջադրում:	Օժտված սովորողների բացահայտում, նրանց հետ տարվող աշխատանքներ		
47	Սովորողների առարկայական օլիմպիադաների նախապատրաստում և իրականացում, դրանց արդյունքների ամփոփում և քննարկուներ մանկավարժական խորհրդի նիստում, մասնախմբերում, աշակերտական խորհրդում և ծնողական խորհրդում: ● Առցանց փուլ ● Առկա փուլ ● Մարզային փուլ ● Հանրապետական փուլ	Մրցույթներին և միջոցառումներին ուսուցիչների և աշակերտների հաջող մասնակցության ապահովում:		Դեկտեմբեր Հունվար Փետրվար Մարտ Մայիս
48	Էլեկտրոնային մատյանների գործածության ամենամսյա ստուգումներ,անհրաժեշտ դիտողությունների և առաջարկությունների գրանցում:	Մատենավարության միասնական կարգի վերահսկողություն:	Հասնել անթերի մատենավարության:	Յուրաքանչյուր ամսվա ավարտին
Դեկտեմբեր				

49	Անցկացնել գիտելիքների և կարողությունների ստուգում 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում:	Սովորողների իմացության ստուգում համապատասխան ուսումնասիրած թեմաների:	Գիտելիքների նախնական ստուգման և վերլուծության արդյունքում շտկել բացթողումները:	Դեկտեմբեր Մայիս
50	Մեթոդական միավորումների կողմից առարկայական օլիմպիադաների հարցաշարերի կազմում և հաստատում տնօրենի կողմից:	Հարցաշարերի կազմման համապատասխանություն առարկայկան չափորոշիչներին:		
51	2023-2024 ուսումնական տարվա 12-րդ դասարանում սովորողների, ըստ քննական առարկաների պետական ավարտական քննությունների ցուցակների կազմում և դրանց փոխանցում «Գնահատման և թեստավորման կենտրոն»/ԳԹԿ:	Քննական կարգի պահանջներին համապատասխան:		
52	Սովորողների քննությունների պատրաստվածության մակարդակի ստուգում:	Հուզող հարցերի պարզաբանում և ճշգրտում, լուծումների առաջադրում:		
53	Սովորողների առարկայական օլիմպիդաների դպրոցական /առցանց և դպրոցական/ արդյունքների ամփոփում և քննարկում: Օլիմպիադայի հաջորդ փուլի նախապատրաստման աշխատանքների իրազեկում և ցուցակի ներկայացում մանկավարժական խորհրդի նիստում:	Առարկայական օլիմպիադաների հաջորդ փուլ անցած սովորողների անվանացանկի հաստատում:	Լրացուցիչ աշխատանք մյուս փուլը հաղթահարելու համար:	
54	Կրթության առանձնահատուկ	ԿԱՊԿ ունեցող սովորողների	ԱՈԻՊ-ի կատարման	

	պարմանների կարք ունեցող աշակերտների ԱՈՒՊ-ներում արձանագրված 2023-2024 ուսումնական տարվա պլան-կատարողականների առաջին կիսամյակի արդյունքների քննարկում և ամփոփիչ գնահատում:	ուսումնառության արդյունքների ամփոփիչ գնահատում:	ապահովում:	
55	Աշխատանքներ սահմանված ժամաքանակից ավել բացակայած սովորողների հետ ●50 և ավելի դասաժամ բացակայություն ● 80 և ավելի դասաժամ բացակայություն ●100 և ավելի դասաժամ բացակայություն ●120 և ավելի դասաժամ բացակայություն	Փոխադրման և ավարտման կարգի պահպանում:	Աշխատանք տանել և բացառել բացակայությունների ավելացումը:	Դեկտեմբեր Ապրիլ Մայիս
56	Առաջին կիսամյակի արդյունքների և կատարած աշխատանքների ամփոփում, հաշվետվությունների ներկայացում: Սովորողների առաջադիմության վերլուծություն և գնահատում՝ ըստ դասարանների:	Առաջին կիսամյակում սովորողների առաջադիմության արդյունքների վերլուծություն:		Ամսվա վերջին շաբաթ
57	Ծրագրերի կատարողականի առարկայական թեմատիկ պլանների համապատասխանության ստուգում մեթոդական միավորման նախագահների հետ:	Ուսուցիչների կողմից կազմված թեմատիկ պլանների կատարողականի երաիսկողություն:	Ծրագրերի լիարժեք կատարման ապահովում:	

58	2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի նախապատրաստում. ●Ուսումնական պլանի կազմում ●Դասաբաշխում ●Դասացուցակի կազմում		Ուսումնական հաստատության համակարգված աշխատանքի ապահովում:	
Հունվար				
59	Երկրորդ կիսամյակի ուսումնական պլանի քննարկում մանկավարժական խորհրդի նիստում և հաստատում տնօրենի կողմից:	2-րդ կիսամյակի ուսումնական պլանի քննարկում:		
60	2-րդ կիսամյակի դասաբաշխում և ուսումնական դասացուցակի կազմում և հաստատում:	Դասաբաշխում և դասացուցակի կազմում հաստատության սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան:		
61	Հաստատության 12-րդ դասարաններում ուսումնական գործընթացի կազմակերպում և առարկայական խմբերի ձևավորում:	12-րդ դասարանում սովորողների ընտրությամբ ձևավորվում են առարկայական խմբեր՝ առաջնորդվելով հաստատության օրինակելի ուսումնաան պլանի պարզաբանմամբ		
62	Հաստատության 12-րդ դասարաններում ըստ սոորողների ընտրած առարկաների առարկայական դասամատյանների կազմում emis.am համակարգում, դրանց գործածության հրահանգավորում:			
63	Մեթոդական միավորման նախագահների հետ		Դասապրոցեսի՝ դիդակտիկ	

	միասին ստուգել ուսուցման տեխնիկական միջոցների օգտագործման, դիդակտիկ նյութերի կիրառման ու դասարանի կահավորման , թեմատիկ, փոխներգործուն, համագործակցային, բաց և օրինակելի դասեր ու դաս-միջոցառումների անցկացման ընթացքը:		նյութերի, աղյուսակների, տեղեկատվական միջոցների, սլայդների ապահովում:	Ուսումնական տարվա ընթացքում
64	Ուսուցիչներին հաղրդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	Մեթոդական միավորուների նիստերի ընթացքում:	Ուսումնական տարվա մասնագիտական որակների զարգացման ապահովում:	
65	Անցկացնել գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից ●Ռուսաց լեցու/ 3-4-րդ դասարաններում, ●Բնագիտություն /5-6-րդ դասարաններում/	Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրություն և դիտարկում:	Սովորողների մոտ նորմալ վարքի դրսևորման ապահովում:	
66	Սովորողների վարքի նկատմամբ հսկողության իրականացում/ հատկապես 10-12-րդ դասարաններում/:	Հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի կողմից հաստատված ներքին կարգապահական աշխատողների և սովորողների վարքագծի կանոնների պահպանում:		
Փետրվար				
67	Ուսուցիչների կողմից էլեկտրոնային դասամատյանների վարում:	Emis.am կայքում ուսուցիչների կողմից աշխատանքների պարտաճանաչ կատարում:		
68	Հետևել, որ ուսուցիչները դասին ներկայանան բոլոր	Ուսուցչի կողմից կազմված օրվա		

	դասերի պլաններով:	թեմատիկ պլանների առկայություն:		
69	Ուսուցանվող թեմաների յուրացումն ստուգելու նպատակով, կատարել բանավոր ուսումնասիրություններ. ●Հայոց լեզու և գրականություն ●Ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն, հայոց պատմություն, մաթեմատիկա առարկաներից՝ մեծ ուշադրություն դարձնելով սովորողների բանավոր խոսքի զարգացման մակարդակին: Արդյունքը ամփոփել մեթոդական միավորումների նիստերում:	Տարբեր առարկանրից սովորողնեի մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման և արժեքային մոտեցումների բանավոր խոսքի արտահայտման ուսումնասիրություն և դիտարկում:	Սովորողի բազմակողմանի զարգացվածության ապահովում:	Ուսումնական տարվա ընթացքում
70	Մեթոդական միավորումների նախագահների հետ կազմել բաց դասերի և փոխադարձ դասալսումների թեմատիկան և ժամանակացույցը, օգնել ուսուցչին և սովորողին կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով:	Հաշվետվությունների կազմում սովորողների առաջադիմության և ուսուցիչների մասնագիտական զարգացման վերաբերյալ՝ հիմնվելով ուսուցիչների և մեթոդական միավորումների ներկայացրած հաշվետվությունների և եզրակացությունների:	Ուսուցիչների և սովորողների մոտ բարձր որաավորման ու կրթական մակարդակի ապահովում:	Ուսումնական տարվա ընթացքում
Մարտ				
71	Հրավիրել մանկավարժական խորհրդատվություններ, բանավեճեր, քննարկումեր, հաղորդումներ ուսուցման	Ուսումնադաստիար ակչական գործընթցի արդյունավետության բարձրացման պետական կրթական չափորոշիչներին		

	գնահատման, կիսամյակային և տարեկան ամփոփումների փոխադրման և ավարտական կարգի, քննությունների և վերաքննությունների կարգի, էլեկտրոնային մատյանների վարման կարգի, matyan.emis.am կայքի գործունեության մանկավարժական մեթոդիկայի նորությունների արժեքային համակարգի ձևավորման, սովորողների և աշխատողների ներքին կարգապահական հարցերի վերաբերյալ:	համապատասխան պահանջների իրագործման մակարդակի վեր հանում:		Ուսումնակա ն տարվա ընթացքում
72	Հաստատությունում օտար լեզուների ուսուցման որակի ստուգում ●Ռուսաց լեզու /5-12-րդ դասարաններում/ ●Գերմաներն /5-12-րդ դասարաններում/ ●Անգլերեն /5-7-րդ դասարաններում/	Օտար լեզուների ուսումնական առարկաների ուսուցման որակի, միջառարկայական կապերի ուսումնասիրություն և սովորողների կողմց անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն:	Սովորողների մոտ օտար լեզվի իմացության ապահովում:	
73	Ուսուցիչների աշխատանքային մշտադիտարկում՝ թեմատիկ գրավոր աշխատանքներին համապատասխան: /ՆԴՎ/	Ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակության ստուգում և քննարկում:		
74	Դասապրոցեսի վերահսկողություն դասալսումների միջոցով: Կատարել դասալսումներ ●Բնագիտական ●ՆԶՊ ●Հասարակագիտություն	Թեմատիկ, զուգահեռ և համալիր դասալսումների իրականացում՝ սովորողների ուսումնառությունը դիտարկելու	Միջինից բարձր արդյունքի ապահովում:	

	●Զեռնարկատիրություն առարկաներից:	նպատակով:		
75	Վերահսկողություն սահմանել ուսումնական գործընթացի որակի և ուսուցման արդյունքների բացահայտմանն ու գնահատմանը: Հետևել հանրակրթական պետական կրթակարգում սահմանված գնահատման հիմնական նպատակների, սկզբունքների և գործառույթների իրականացմանը: Ըստ նպատակադրման ստուգել գնահատման կիրառված ձևերը: ●Ընթացիկ գնահատում 5-12-րդ դասարաններում ●Ամփոփիչ գնահատում 5-12-րդ դասարաններում ●Հայտորոշիչ գնահատում 5-12-րդ դասարաններում ●Զնավորող գնահատում ●Հետազոտական գնահատում	Ճշտել ուսումնական նյութի յուրացումը միջին և ավագ դպրոցում Ուսումնասիրել դասավանդվող նյութի բովանդակության յուրացման մակարդակը, դասավանդման մեթոդներն ավագ դպրոցում: Ուսումնասիրել ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունքները մեթոդական միավորումների նախագահների մոտ:		

76	Առարկայական մեթոդական միավորումների աշխատանքի վերահսկողությունը իրականացնելիս նկատի ունենալ ●Աշխատանքների պլանավորումը ●Նիստերի արձանագրությունների վարումը ●Արդիական դասերի տիպերի ընտրությունը, դասերի վարման արդիական պահանջների պահպանումը: ●Դասավանդման նոր մեթոդների և ավանդական մեթոդների ճիշտ զարգացումը: ●Դասերի պլանավորումը, քննարկումը, բաց դասերի կազմակերպումը փորձառու ուսուցիչների կողմից ●Սովորողների գիտելիքների, կարողությունների, և հմտությունների որակի համատեղ վերլուծություն:	Մեթոդական միավորումների աշխատանքների հսկողություն, ըստ մեթոդական միավորումների կիսամյակային և տարեկան աշխատանքային պլանների:		
Ապրիլ				
77	2022-2023 ուսումնական տարվա շրջանավարտների պետական ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների դիմում հայտերի ընդունում, փաստաթղթերի կազմում և առաքում էլեկտրոնային փոստով:	Ուսումնասիրություն ների իրականացում քննական առարկաներից սովորողների առաջադիմության վերաբերյալ:	Ժամանակի հայտագրման ապահովում:	
78	9-րդ դասարաններում սովորողների	Քննական կարգի պահանջների		

	ավարտական քննությունների նախնական ցուցակների կազմում: 12-րդ դասարաններում սովորողների պետական ավարտական քննությունների ցուցակների կազմում և դրանց առաքում էլեկտրոնային փոստով:	ապահովում:		
79	«Կենգուրու 2024» մրցույթի անցկացում /կարգը և ժամանակացույցը 3-12-րդ դասարաններում/:	Ժամանակին վճարման կատարում և հայտագրում:	Մրցույթին մասնակցության ապահովում:	
80	Իրականացնել ավարտական քննություններից առաջ քննական առարկաների ց նախնական գիտելիքների ստուգում /փորձնական քննություն/:	Ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտներին լրացուցիչ աշխատանքի միջոցով հասցնել միջին մակարդակի:	Թույլ սովորողներին հաղթահարելու հնարավորություն ապահովել:	
81	Ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների բացահայտում և նրանց կրթական կարիքների գնահատում:	Իրականացնել ցածր առաջադիմություն ունեցող սովորողների կրթական խնդիրների միասնական պահանջների ապահովման վերահսկողություն, պարբերաբար ստուգելով մատյանները և ըստ թեմաների ստացած գնահատականների արձանագրություն ների՝ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների անունները: Իրականացնում է	Կրթական աջակցության և ծառայության շնորհիվ դրական դրական առաջընթաց է ապահովվում:	

		վերոնշյալ սովորողների ուսման որակի գրավոր ստուգում: Ներկայացնում է ցածր առաջադիմություն ունեցող սովորողների համար կրթական աջակցության ծառայությունների պլանը:		
82	2-4-րդ դասարաններում ընթերցանության տեխնիկայի և ընկալունակության ստուգում մայրենիից:	Տարրական դասարաններում սովորողների կարդալու և ընկալելու կարողությունների դրսևորումների բացահայտում:		Ամսվա ընթացքում
83	Առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի ամփոփում:	Մեթոդական միավորումների կողմից տրված վերլուծությունների հիման վրա առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին՝ սովորողների մասնակցության արդյունքների ամփոփում մանկավարժական խորհրդի նիստում:		
Մայիս				
84	2023-2024 ուսումնական տարա ընթացքում 2-12-րդ դասարաններում սահմանված ժամաքանակից 120-200 և ավել դասաժամ բացակայած սովորողների հաշվառում, ցանկի ներկայացում	Փոխադրական, ավարտական քննական կարգերի պահանջների ապահովում: Հաշվետվության ներկայացում 120-200 ժամ բացակա ունեցող սովորողների		

	մանկավարժական խորհրդին, փաստաթղթերի կազմում, քննությունների և ստուգարքների կազմակերպում և անցկացում, ծնողների իրազեկում, աշխատանք էլեկտրոնային մատյաններով:	քննության արդյունքների վերաբերյալ:		
85	4-րդ դասարանում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանում ավարտական և կենտրենացված և 12-րդ դասարաններում պետական ավարտական և միասնական քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացում և քննական հանձնաժողովների կազմի հաստատում մանկավարժական խորհրդի նիստում:	Քննությունների կազմակերպեւմ և վերահսկում «Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման և ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման ավարտման և ուսումնական տարվա ընթացքում բացակայած սովորողը՝ հաջորդ դասարան կամ հանրակրթական հաջորդ աստիճան փոխադրման կարգի » դրույթներին համապատասխան:		
86	2023-2024 ուսումնական տարվա փոխադրման, ավարտման և քննական կարգի մասսայականություն ուսուցիչների , սովորողների, ծնողների շրջանում:	Ուսուցիչների, աշակերտների և ծնողների իրազեկում:		
87	2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության ամփոփում, 4-րդ	Փոխադրման, ավարտման և քննական կարգերի պահանջների		

	դասարանի գիտելիքների ստուգման, 9-րդ դասարանի ավարտական քննություններին , 12րդ դասարանում պետական ավարտական քննություններին թույլտվություն:	ապահովում:		
88	Քննությունների և նախաքննական խորհրդատվությունների աշխատակարգի և ժամանակացույցի կազմում:	Փոխադրման, ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում:		
89	9-րդ դասարաններում ֆիզկուլտուրայի քննությունների և 12-րդ դասարաններում ստուգարքի նախապատրաստում, կազմակերպում և ամփոփում:	Փոխադրման, ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում:		
90	Քննող և ստուգող հանձնաժողովների, կազմակերպիչների ու հերթապահների նախնական ցանկի կազմում:	Փոխադրման, ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում:		
91	Քննական կենտրոնի և քննասենյակների կահավորում:	Քննական կարգերի պահանջների ապահովում:		
92	9-րդ, 12-րդ, դասարաններում պետական ավարտական քննությունների կազմակերպում և անցկացում , դրանց արդյունքների ամփոփում և փոխանցում էլեկտրոնային մատյաններ:	Փոխադրման ավարտման և և քննական կարգերի պահանջների ապահովում:		
93	Տարեկան 1 կամ 2 առարկայից անբավարար գնահատված աշակերտների՝ ամառային առաջադրանքների	Փոխադրման ավարտման և քննական կարգերի պահանջների ապահովում:		

	հանձնարարում:			
94	Աշակերտների կիսամյակայինների լրացման ու վարման գործունեության ստուգում:	Դասղեկների աշխատանքների կազմակերպում:		
Հունիս				
95	Սովորողների տարեկան գնահատականների լրացում և ստուգում:	Դասղեկների կազմած տեղեկատվության ճշտում:		
96	Ավարտական դասարանների աշակերտների տարեկան և քննական գնահատականների լրացում և ստուգում:	Սահմանված կարգի ժամկետների ապահովում:		
97	Ուսուցիչների և մեթոդական միավորումների նախագահների տարեկան հաշվետվությունների քննարկում:	Կատարողական վերլուծություն:		
97	Առանձին առարկաների տարեկան առաջադիմության ամփոփագրերի կազմում	Կատարողական վերլուծություն:		
98	2024-2025 ուսումնական տարվա ուսումնական պլանին ծանոթացում, նախնական կոմպլեկտավորում և դասաբաշխում, ըստ գալիք տարվա դպրոցի ուսումնական պլանի նախագծի:	Գալիք ուսումնական տարվա նախապատրաստում:		
99	Դպրոցի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի 2023-2024 ուսումնական տարվա աշխատանքնային գործունեության հաշվետվության կազմում:	Կատարողական վերլուծություն		

2023-2024 ուսումնական տարվա մեթոդական միավորումների նիստերի օրակարգի հեռանկարային պարտադիր հարցեր

Օգոստոս Նիստ 1-ին	
1	Անցած ուսումնական տարվա աշխատանքների քննարկում և գնահատում:
2	Մեթոդական միավորումների նախագահի, քարտուղարի ընտրություն:
3	2023-2024 ուսումնական տարվա մեթոդական միավորումների աշխատանքնային պլանների կազմում և հաստատում:
4.	Թեմատիկ և աշխատանքային պլանների կազմում և հաստատում:
5	Նոր դասագրքերի քննարկում
6	Այլ հարցեր:
Սեպտեմբեր Նիստ 2-րդ	
1	2022-2023 ուսումնական տարվա հաշվետվություն:
2	2023-2024 ոսումնական տարվա աշխատանքային պլան:
3	Դպրոցական բաղադրիչի ժամերի բաշխում / ըստ առարկաների/:
4	Նոր չափորոշիչների քննարկում:
5	Մեթոդական միավորումների աշխատանքների կազմակերպում, պլանավորում: ● Կազմել մասնախմբերի նրստերի ժամանակացույցը, ներկայացնել հաստատման ●Կազմել առարկայական միամսյակների ժամանակացույցը, ներկայացնել հաստատման:
Հոկտեմբեր Նիստ 3-րդ	
1	Նոր մթոդների կիրառման հարցը:
2	Բարձր դասարաններում սովորողների բացակայությունների հարցը:
3	Բաց դասերի առարկայական շաբաթների, գործնական աշխատանքների, արտադասարանական միջոցառումների քննարկում:
4	Ստուգում կատարել դասալսումների միջոցով, այնուհետև տալ գրավոր աշխատանքներ: Գրավորների արդյունքները քննարկել աշակերտների հետ՝ պարզաբանելով աշակերտների ուժեղ և թույլ կողմերը տվյալ առարկայից:
5	Նախապատրաստվել ներդպրոցական օլիմպիադայի:

Նոյեմբեր Նիստ 4-րդ	
1	Ուսումնական նախագծերի խնդիրներն ու դժվարությունները:
2	Բնագիտական առարկաների դրվածքի ուսումնասիրություն:
3	Ներդպրոցական առարկայական օլիմպիադայի նախապատրաստում և անցկացում:
4	Սովորողների մոտ հմտությունների ու կարողությունների զարգացման գնահատում
Դեկտեմբեր Նիստ 5-րդ	
1	1-ին կիսամյակի ամփոփում:
2	12-րդ դասարանների առաջին կիսամյակի տարեկան գնահատականների փակում և համեմատում: Քննությունների կազմակերպում և անցկացում:
3	Էլեկտրոնային մատյանների մատենավարումը առաջին կիսամյակում:
4	Առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի արդյունքները: Լավագույն սովորողների տարածքային փուլին մասնակցությունը: Արդյունքների ամփոփում:
5	Ներկայացնել մարզային փուլ անցած սովորողների ցուցակը:
Հունվար Նիստ 6-րդ	
1	Ուսումնական պլանում և թեմատիկ պլաններում փոփոխությունների քննարկում:
2	Ներդպրոցական առարկայական օլիմպիադաներում հաղթած աշակերտների հետ կազմակերպել անհատական պարապմուքներ՝ նախապատրաստելով հաջորդ փուլերի մասնակցությանը:
3	Էլեկտրոնային մատյանը վարելու հարցի քննարկում:
4	12-րդ դասարանների խմբային ուսուցման կազմակերպում և վերահսկում:
5	Տրված գրավոր աշխատանքների / Ռուսաց լեզու 3- 4-րդ դասարաններ, բնագիտություն՝ 5-6-րդ դասարաններ/ արդյունքների ամփոփում:

Փետրվար Նիստ 7-րդ	
1	2-4-րդ դասարաններում ընթերցանության գնահատման, կազմակերպման հարցը:
2	5-12-րդ դասարաններում վերջնարդյունքների կազմակերպման նպատակով, սովորողների կարողությունների զարգացման գնահատումը կազմակերպելու հարցը:
3	Բանավոր ուսումնասիրությունների արդյունքների վերլուծություն /Հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա, հայոց պատմություն և բնագիտություն առարկաներից/:
Մարտ Նիստ 8-րդ	
1	Օտար լեզուների 10-օրյակի կազմակերպում: Արդյունքի վերլուծում և քննարկում:
2	Փոխադարձ դասալսումների կազմակերպման քննարկում:
3	«Հասարակագիտություն», «Հայոց եղեցու պատմություն», «Պատմություն», «Ձեռնարկատիրություն » առարկաների դասավանդման որակի անհատական ուսումնասիրության պլանավորում ապրիլ-մայիսին իրականցնելու համար:
4	Ստուգել բոլոր առարկաների գրավորների քանակի համապատասխանությունը:
Ապրիլ Նիստ 9-րդ	
1	Առաջին դասարանի սովորողների գրաճանաչության ստուգում:
2	Քննական առարկաների վիճակը 9-րդ, 12-րդ դասարաններում:
3	9-րդ և12-րդ դասարաններում «Հայոց լեզու» «Մաթեմատիկա » առարկաներից փորձնական քննություններ կազմակերպլեու համար կազմել համապատասխան թեստեր, մայիս ամսին անցկացնելու համար:
4	2-8-րդ, 10-րդ, 11-րդ դասարաններում մայրենիից, մաթեմատիկայից, հայոց լեզու և գրականությունից գրավոր աշխատանք տալու հարցը:
5	Առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցող սովորողների նախապատրաստում:
6	Տարրական /2-4դդ/ դասարաններում ընթերցանության գնահատման արդյունքների քննարկում:
	Մայիս Նիստ 10-րդ
1	2-րդ կիսամյակի և տարեկան առաջադիմության ամփոփում:

2	120-200 դասաժամ բացակայություն ունեցող սովորողների համար քննությունների և ստուգողական աշխատանքների կազմակերպում:
3	Բանավոր քննությունների տոմսերի քննարկում և հաստատում:
4	Էլեկտրոնային մատյանների վարման ստուգում:
5	Քննությունների կազմակերպման հարցերի քննարկում:
	Հունիս Նիստ 11-րդ
1	Ուսումնական տարվա մեթոդական միավորումների որոշումների կատարման մասին մեթոդական միավորումների նախագահների զեկուցումը:
2	Էլեկտրանային մատյանները վարելու որակը:
3	Հաստատության սովորողների համար կազմակերպած ավարտական, կենտրոնացված ավարտական և պետական ավարտական քննությունների արդյունների վերլուծություն և ամփոփում:
4	Ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքների վերլուծություն և ամփոփում:
5	Հաջորդ ուումնական տարվա անելիքների նախնական պլանավորում:
6	Նախնական դասաբաշխում: